ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/284

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանի ներկայացուցիչ Ա.Պարանյանի (լիազորագիր՝ տրված 14.10.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.10.2021թ. թիվ 26/26-1/16189-2021 գրությամբ Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 28.09.2021թ. թիվ ՊՆ//5197-2021 գրության հիման վրա, 05.10.2021թ. թիվ 26/26-1/16189-

2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանը, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական սարքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/33» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Վերը նշված ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԴԱՎԻԹ ԹՈՒՄԱՆՅԱՆ ԳԱԳԻԿԻ» Ա/Ձ-ն/այսուհետև նաև՝ Ա/Ձ/:

Ընթացակարգի տեխնիկական բնութագիր գնման-ժամանակացույցով նախատեսվել է հետևյալը.

Գնման առարկայի					
Հ/Հ	CPV անվանումը	անվանումը	Տեխնիկական բնութագիր	մակնիշը	Արտադրողի անվանումը
1	սեղանի վրա դրվող ցեբտրիֆուգներ	սեղանի վրա դրվող ցեբտրիֆուգ	Լաբորատոր ցենտրիֆուգ՝ ոչ պակաս քան 12 փորձանոթի համար, Միկրոպրոցեսոր, հեղուկ բյուրեղային (ՀԲ) էկրան, Կափարիչի փակումը՝ էլեկտրական կամ մեխանիկական, որը արգելափակու է աշխատանքի ընթացքում կափարիչի բացելու հնարավորությունը: 2 Անհավասարակշռության հայտնաբերման և անջատման համակարգի առկայություն, աշխատանքի ընթացքում՝ հովացման համակարգի առկայություն, Ծրագրավորված և իրական արժեքների անընդհատ ցուցադրում վահանակի միջոցով, Ցենտրիֆուգման արագության տիրույթը՝ ոչ պակաս քան 200-5500 պտ/ր., արագության կարգավորումը՝ ոչ ավել քան 50 պտ/ր. աճով Օգտագործվող փորձանոթների տեսակները առնվազն՝ 4տեսակ (15 մլ, 10 մլ, 5 մլ, 2 մլ), Լրակազմը պետք է պարունակի նաև անկյունային ռոտոր առնվազն 2 ներդիրներով՝ 12x15 մլ և 12x5 մլ, Էլեկտրասնուցումը՝ ստանդարտ քաղաքային ցանցից 220+/-10% Վ, 50 Հց: Քաշը՝ ոչ ավել քան 30 կգ:		

Ա/Ձ-ի կողմից 15.09.2021թ. Հավելված 1.1-ով ներկայացվել է առաջարկվող ապրանքի հետևյալ ամբողջական նկարագիրը.

Գնման առարկայի			
Հ/Հ	մակնիշ	Արտադրողի անվանումը	Տեխնիկական բնութագիր
1	սեղանի վրա դրվող		Լաբորատոր ցենտրիֆուգ՝ ոչ պակաս քան 12 փորձանոթի համար, Միկրոպրոցեսոր, հեղուկ բյուրեղային (ՀԲ) էկրան, Կափարիչի փակումը՝ էլեկտրական կամ

	ցեբտրիֆուգներ		մեխանիկական, որը արգելափակու է աշխատանքի ընթացքում կափարիչի բացելու հնարավորությունը: Անհավասարակշռության հայտնաբերման և անջատման համակարգի առկայություն, աշխատանքի ընթացքում՝ հովացման համակարգի առկայություն, Ծրագրավորված և իրկան արժեքների անընդհատ ցուցադրում վահանակի միջոցով, Ցենտրիֆուգման արագության տիրույթը՝ ոչ պակաս քան 200-5500 պտ/ր., արագության կարգավորումը՝ ոչ ավել քան 50 պտ/ր. աճով Օգտագործվող փորձանոթների տեսակները առնվազն՝ 4տեսակ (15 մլ, 10 մլ, 5 մլ, 2 մլ), Լրակազմը պետք է պարունակի նաև անկյունային ռոտոր առնվազն 2 ներդիրներով՝ 12x15 մլ և 12x5 մլ, Էլեկտրասնուցումը՝ ստանդարտ քաղաքային ցանցից 220+/-10% Վ, 50 Հց: Քաշը՝ ոչ ավել քան 30 կգ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.09.2021թ. ծանուցման համաձայն՝ Ընթացակարգով «ԴԱՎԻԹ ԹՈՒՄԱՆՅԱՆ ԳԱԳԻԿԻ» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում կան անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ «Սեղանի վրա դրվող ցենտրիֆուգ ապրանքատեսակի մասով Դավիթ Թումանյան Գագիկի ԱՁ-ի կողմից հայտով ներկայացված՝ գնանշման հարցմանը մասնակցելու առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N1.1)-ում, «արտադրողի անվանումը» սյունակում, բացակայում է առաջարկվող ապրանքի արտադրողի անվանման մասին տեղեկատվությունը, բացի այդ՝ «մակնիշը» սյունակում նշված է «սեղանի վրա դրվող ցեբտրիֆուգ», այնինչ անհրաժեշտ է նշել ընթացակարգի հրավերով պահանջվող՝ առաջարկվող ապրանքի մակնիշի մասին տեղեկատվությունը, ինչպես նաև «տեխնիկական բնութագիրը» սյունակում նշված «Կափարիչի փակումը՝ էլեկտրական կամ մեխանիկական, որը արգելափակում է աշխատանքի ընթացքում կափարիչի բացելու հնարավորությունը» հատվածում անհրաժեշտ է հստակեցնել Ձեր կողմից առաջարկվող ապրանքը՝ բացառելով «կամ» բառը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով որոշեց կասեցնել հայտերի գնահատման նիստը՝ առաջարկելով Ձեզ սույն ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերոնշյալ անհամապատասխանությունը:

Շտկված փաստաթուղթը սահմանված կարգով անհրաժեշտ է ուղարկել սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Թազայանի էլեկտրոնային փոստին՝ l.tazayan@mil.am հասցեով:»

Ա/Ձ-ի կողմից 22.09.2021թ. Հավելված 1.1-ով ներկայացվել է առաջարկվող ապրանքի հետևյալ ամբողջական նկարագիրը.

Առաջարկվող ապրանքի			
Հ/Հ	մակնիշը	Արտադրողի անվանումը	Տեխնիկական բնութագիր
1	սեղանի վրա դրվող ցեբտրիֆուգներ TD6M	HUNAN CENLEE SCIENTIFIC INSTRUMENTS CO., LTD HUNAN KENCHENG INSTRUMENTS EQUIOMENT CO., LTD BIORIDGE LTD	Լաբորատոր ցենտրիֆուգ՝ ոչ պակաս քան 12 փորձանոթի համար, Միկրոպրոցեսոր, հեղուկբյուրեղային (ՀԲ) էկրան, Կափարիչի փակումը՝ էլեկտրական կամ մեխանիկական, որը արգելափակու է աշխատանքի ընթացքում կափարիչի բացելու հնարավորությունը: Ունի օդափոխվող համակարգ, որը նախատեսված է շահագործման ընթացքում ջերմաստիճանը չբարձրանալու համար: Աշխատանքի ընթացքում վահանակի միջոցով իրական արժեքների ցուցադրում.During its running, it display its running actual values/. Ցենտրի ֆուգմանարագության տիրույթը՝ ոչ պակաս քան 200-5500 պտ/ր., արագության կարգավորումը՝ ոչ ավե լքան 50 պտ/ր. աճով Օգտագործվող փորձանոթների տեսակները առնվազն՝ 4 տեսակ (15 մլ, 10 մլ, 5 մլ, 2 մլ), 4 Լրակազմը պետք է պարունակի նաև անկյունային ռոտոր առնվազն 2 ներդիրներով՝ 12x15 մլև 12x5 մլ, Էլեկտրասնուցումը՝ ստանդարտ քաղաքային ցանցից 220+/-10% Վ, 50 Հց: Քաշը՝ ոչ ավել քան 30 կգ:

Արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է «ԴԱՎԻԹ ԹՈՒՄԱՆՅԱՆ ԳԱԳԻԿԻ» Ա/Ձ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական սարքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/33» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԴԱՎԻԹ ԹՈՒՄԱՆՅԱՆ ԳԱԳԻԿԻ» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.09.2021թ. ծանուցման համաձայն՝ Ընթացակարգով «ԴԱՎԻԹ ԹՈՒՄԱՆՅԱՆ ԳԱԳԻԿԻ» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում կան անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ «Սեղանի վրա դրվող ցենտրիֆուգ ապրանքատեսակի մասով Դավիթ Թումանյան Գագիկի ԱՁ-ի կողմից հայտով ներկայացված՝գնանշման հարցմանը մասնակցելու առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N1.1)-ում, «արտադրողի անվանումը»սյունակում, բացակայում է առաջարկվող ապրանքի արտադրողի անվանման մասին տեղեկատվությունը, բացի այդ՝«մակնիշը» սյունակումնշված է «սեղանի վրա դրվող ցեբտրիֆուգ», այնինչ անհրաժեշտ է նշել

ընթացակարգի հրավերով պահանջվող՝ առաջարկվողապրանքի մակնիշի մասին տեղեկատվությունը, ինչպես նաև «տեխնիկական բնութագիրը» սյունակում նշված «Կափարիչի փակումը՝ էլեկտրական կամ մեխանիկական, որը արգելափակում է աշխատանքի ընթացքում կափարիչի բացելու հնարավորությունը» հատվածում անհրաժեշտ է հստակեցնել Ձեր կողմից առաջարկվող ապրանքը՝ բացառելով «կամ» բառը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովըմեկ աշխատանքային օրով որոշեց կասեցնել հայտերի գնահատմաննիստը՝ առաջարկելով Ձեզ սույն ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերոնշյալ անհամապատասխանությունը:

Շտկված փաստաթուղթը սահմանված կարգով անհրաժեշտ է ուղարկել սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Թազայանի էլեկտրոնային փոստին՝ l.tazayan@mil.am հասցեով:»

Ա/Ձ-ի կողմից 22.09.2021թ. Հավելված 1.1-ով ներկայացվել է առաջարկվող ապրանքի հետևյալ ամբողջական նկարագիրը.

Առաջարկվող ապրանքի			
Հ/հ	մակնիշը	Արտադրողի անվանումը	Տեխնիկական բնութագիր
1	սեղանի վրա դրվող ցեբտրիֆուգներ TD6M	HUNAN CENLEE SCIENTIFIC INSTRUMENTS CO., LTD HUNAN KENCHENG INSTRUMENTS EQUIOMENT CO., LTD BIORIDGE LTD	Լաբորատորցենտրիֆուգ՝ ոչպակասքան 12 փորձանոթի համար, Միկրոպրոցեսոր, հեղուկբյուրեղային (ՀԲ) էկրան, Կափարիչիփակումը՝ էլեկտրականկամմեխանիկական, որըարգելափակուէաշխատանքիընթացքումկափարիչիբացելուհնարավորությունը: Ունիօդափոխվողհամակարգ, որընախատեսվածէշահագործմանընթացքումջերմաստիճանըչբարձրանալուհամար: Աշխատանքիընթացքումվահանակիմիջոցովիրականարժեքներիցուցադրում.During its running, it display its running actual values/. Ցենտրիֆուգմանարագությանտիրույթը՝ ոչպակասքան 200-5500 պտ/ր., արագությանկարգավորումը՝ ոչավելքան 50 պտ/ր. Աճով Օգտագործվողփորձանոթներիտեսակներըառնվազն՝ 4տեսակ (15 մլ, 10 մլ, 5 մլ, 2 մլ), Լրակազմըպետքէպարունակինաևանկյունայինռոտորառնվազն 2 ներդիրներով՝ 12x15 մլև 12x5 մլ, Էլեկտրասնուցումը՝ ստանդարտքաղաքայինցանցից 220+/-10% Վ, 50 Հg: Քաշը՝ ոչավելքան 30 կգ:

Արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է «ԴԱՎԻԹ ԹՈՒՄԱՆՅԱՆ ԳԱԳԻԿԻ» Ա/Ձ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Տվյալ պարագայում «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/33» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը «ԴԱՎԻԹ ԹՈՒՄԱՆՅԱՆ ԳԱԳԻԿԻ» Ա/Ձ-ի հայտը

անբավարար գնահատելով և մերժելով՝ խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով երաշխավորված մասնակցության իրավունքի սահմանափակմանը:

Մասնավորապես՝ «ԴԱՎԻԹ ԹՈՒՄԱՆՅԱՆ ԳԱԳԻԿԻ» Ա/Ձ-ի կողմից 22.09.2021թ. Հավելված 1.1-ով ներկայացվել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագում ներկայացված առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշելով հետևյալը՝ «Ունի օդափոխվող համակարգ, որը նախատեսված է շահագործման ընթացքում ջերմաստիճանը չբարձրանալու համար» լիովի համապատասխանում է հրավերի տեխնիկական բնութագիր գնման-ժամանակացույցով նշված «Անհավասարակշռության հայտնաբերման և անջատման համակարգի առկայություն, աշխատանքի ընթացքում՝ հովացման համակարգի առկայություն»:

Գնահատող հանձնաժողովի կողմից անտեսվել է վերը նշված փաստական հանգամանքը և որոշում է կայացվել «ԴԱՎԻԹ ԹՈՒՄԱՆՅԱՆ ԳԱԳԻԿԻ» Ա/Ձ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, մինչդեռ Ա/Ձ-ի կողմից սահմանված ժամկետում կատարվել է անհամապատասխանությունների շտկումը և ուղարկվել Ընթացակարգի քարտուղարի էլ. հասցեին:

Անհասկանալի կերպով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է այն հավելվածը, որում նշվել է Ունի օդափոխվող համակարգ, որը նախատեսված է շահագործման ընթացքում ջերմաստիճանը չբարձրանալու համար, մինչդեռ նույն օրվա ընթացքում ներկայացված մյուս Հավելվածը չի գնահատվել գնահատող հանձնաժողովի կողմից, դեռ ավելին երբ կատարվել է հեռախոսազանգ Պատվիրատուի ներկայացուցչին ճշտելով՝ արդյոք ստացվել է նամակը, թե ոչ՝ ստացել ենք պատասխան որ միայն մեկ Հավելված 1.1-ն է ստացվել էլ. հասցեին:

Վերը նշված փաստով պայմանավորված նույն նամակը հաջորդ օրը ներկայացվել է նորից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, որը ինչպես պարզվեց հետագայում գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է որպես շտկման ժամկետից հետո ներկայացված Հավելված:

Գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից սարքավորման տեխնիկական հնարավորության տառացի նշումը՝ ավելորդ կերպով ծանրաբեռնում է մասնակցության հայտ ներկայացրած ընկերություններին և պահանջը շտկում կատարել, որում պետք է տառացի նշվի այնպիսի տեխնիկական չափորոշիչ, առանց որի այդ սարքավորումը բնության մեջ չի կիրառվում՝մեր կարծիքով կրում է ձևական բնույթ:

Տվյալ պարագայում «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/33» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը «ԴԱՎԻԹ ԹՈՒՄԱՆՅԱՆ ԳԱԳԻԿԻ» Ա/Ձ-ի հայտը անբավարար գնահատելով և մերժելով՝ խախտել է «Գնումների մասին» ՀՀ 3-րդ հոդվածով երաշխավորված մասնակցության իրավունքի սահմանափակմանը, մասնավորապես անհամապատասխանությունների շտկման ժամկետում ներկայացվել է թվով երկու Հավելված 1.1, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից հիմք է ընդունվել այն Հավելվածը, որտեղ առկա է եղել մեկ կետի բացակայություն, իսկ այնուհետև երբ Ա/Ձ-ի կողմից տառացի կերպով Հրավերի տեխնիկական բնութագրի հետ նույնականացվող Հավելված 1.1 ներկայացվել է նաև հաջորդող օրը, գնահատող հանձնաժողովը գնահատել է, որպես շտկման ժամկետից ուշ ներկայացված փաստաթուղթ:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները և Ընկերության դրսևորած վարքագիծը՝ «ԴԱՎԻԹ ԹՈՒՄԱՆՅԱՆ ԳԱԳԻԿԻ» Ա/Ձ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/284 ընթացակարգի շրջանակներում 29.10.2021թ. ժամը 09:40-ին և 09.11.2021թ. ժամը 09:18-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը 09.11.2021թ. ժամը 09:18-ին հրավիրված նիստին, ով իր հերթին պնդել է ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 28.09.2021թ. թիվ ՊՆ//5197-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Բժշկական սարքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/33» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին, հայտ է ներկայացրել Դավիթ Թումանյան Գագիկի Ա/Ձ-ն: Վերջինիս կողմից ներկայացված հայտի N 1.1 հավելվածում

(առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում)՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում, գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ սույն ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ: Սահմանված կարգով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով՝ ոչ ավտոմատ ծանուցմամբ, սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ նշված մասնակցին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել է արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում վերջինս շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, սակայն գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով առաջարկվող ապրանքի շտկված տեխնիկական բնութագիրը, արձանագրել է, որ տվյալ փաստաթղթում բացակայում է սույն ընթացակարգի հրավերով պահանջվող և ի սկզբանե մասնակցի հայտով ներկայացված տեղեկատվությունը, մասնավորապես՝ ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում էր «ապրանքատեսակի մասով ընթացակարգի հրավերով պահանջված՝ տեխնիկական բնութագրի մաս կազմող «Անհավասարակշռության հայտնաբերման և անջատման համակարգի առկայության, ինչպես նաև ծրագրավորված և վահանակի միջոցով արժեքների անընդհատ ցուցադրման» մասին տեղեկատվությունը, ինչը չէր համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին»:

Հաշվի առնելով այն, որ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունները կրկնակի շտկելու հնարավորություն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2021թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների մասին գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը՝ սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.09.2021թ. կայացած նիստում որոշել է Դավիթ Թումանյան Գագիկի Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել սույն ընթացակարգի հրավերի պահանջներին անբավարար և մերժել վերջինիս հայտը:

Կից ուղարկվում են Դավիթ Թումանյան Գագիկի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/284 ընթացակարգի շրջանակներում 29.10.2021թ. ժամը 09:40-ին և 09.11.2021թ. ժամը 09:18-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/284 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/284 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/33» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.09.2021թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ սեղանի վրա դրվող ցենտրիֆուգ ապրանքատեսակի մասով Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանի կողմից հայտով ներկայացված՝ գնանշման հարցմանը մասնակցելու առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N 1.1)-ում, «արտադրողի անվանումը» սյունակում, բացակայում է առաջարկվող ապրանքի արտադրողի անվանման մասին տեղեկատվությունը, բացի այդ՝ «մակնիշը» սյունակում նշված է «սեղանի վրա դրվող ցեբտրիֆուգ», այնինչ անհրաժեշտ է նշել ընթացակարգի հրավերով պահանջվող՝ առաջարկվող ապրանքի մակնիշի մասին տեղեկատվությունը, ինչպես նաև «տեխնիկական բնութագիրը» սյունակում նշված «Կափարիչի բացելու հնարավորությունը» հատվածում անհրաժեշտ է հստակեցնել մասնակցի կողմից առաջարկվող ապրանքը՝ բացառելով «կամ» բառը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 17.09.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ 24.09.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանի կողմից արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկվել են, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով առաջարկվող ապրանքի

շտկված տեխնիկական բնութագիրը, արձանագրել է, որ տվյալ փաստաթղթում բացակայում է սույն ընթացակարգի հրավերով պահանջվող և ի սկզբանե մասնակցի հայտով ներկայացված տեղեկատվությունը, մասնավորապես՝ ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N 1.1) «տեխնիկական բնութագիրը» սյունակում բացակայում էր ապրանքատեսակի մասով ընթացակարգի հրավերով պահանջված տեխնիկական բնութագրի մաս կազմող «Անհավասարակշռության հայտնաբերման և անջատման համակարգի առկայության ինչպես նաև ծրագրավորված և վահանակի միջոցով արժեքների անընդհատ ցուցադրման» մասին տեղեկատվությունը, ինչը չէր համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ: Միևնույն ժամանակ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ 23.09.2021թ. Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանի կողմից ներկայացված գնումների համակարգողի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված N 1.1) չի քննարկվել, քանի որ այն ներկայացվել էր օրենսդրությամբ սահմանված ժամկետի խախտմամբ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 05.10.2021թ. թիվ 26/26-1/16189-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 28.09.2021թ. թիվ ՊՆ//5197-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ

հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/33» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.09.2021թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ սեղանի վրա դրվող ցենտրիֆուգ ապրանքատեսակի մասով Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանի կողմից հայտով ներկայացված՝ գնանշման հարցմանը մասնակցելու առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N 1.1)-ում, «արտադրողի անվանումը» սյունակում, բացակայում է առաջարկվող ապրանքի արտադրողի անվանման մասին տեղեկատվությունը, բացի այդ՝ «մակնիշը» սյունակում նշված է «սեղանի վրա դրվող ցեբտրիֆուգ», այնինչ անհրաժեշտ է նշել ընթացակարգի հրավերով պահանջվող՝ առաջարկվող ապրանքի մակնիշի մասին տեղեկատվությունը, ինչպես նաև «տեխնիկական բնութագիրը» սյունակում նշված «Կափարիչի բացելու հնարավորությունը» հատվածում անհրաժեշտ է հստակեցնել մասնակցի կողմից առաջարկվող ապրանքը՝ բացառելով «կամ» բառը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 17.09.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Մասնակցի կողմից որպես շտկում ներկայացված Հավելված N 1.1-ը ներկայացվել է հետևյալ բովանդակությամբ.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը
1	սեղանի վրա դրվող ցենտրիֆուգ *TD6M*	*HUNAN CENLEE SCIENTIFIC INSTRUMENTS CO., LTD* *HUNAN KENCHENG INSTRUMENT EQUIOMENT Co., LTD* *BIORIDGE LTD*	Լաբորատոր ցենտրիֆուգ՝ ոչ պակաս քան 12 փորձանոթի համար, Միկրոպրոցեսոր, հեղուկ բյուրեղային (ՀԲ) էկրան, Կափարիչի փակումը՝ մեխանիկական, որը արգելափակում է աշխատանքի ընթացքում կափարիչի բացելու հնարավորությունը: Ունի օդափոխվող համակարգ, որը նախատեսված է շահագործման ընթացքում ջերմաստիճանը չբարձրանալու համար Աշխատանքի ընթացքում վահանակի միջոցով իրական արժեքների ցուցադրում. /During its running, it display its running actual values/. Ցենտրիֆուգման արագության տիրույթը՝ 200-6000 պտ/ր., արագության կարգավորումը՝ ոչ ավել քան 50 պտ/ր. աճով Օգտագործվող փորձանոթների տեսակները առնվազն՝ 4տեսակ (15 մլ, 10 մլ, 5 մլ, 2 մլ), Լրակազմը պետք է պարունակի նաև անկյունային ռոտոր առնվազն 2 ներդիրներով՝ 12x15 մլ և 12x5 մլ, Էլեկտրասնուցումը՝ ստանդարտ քաղաքային ցանցից 220+/-10% Վ, 50 Հց: *Քաշը՝ 22-25 կգ :*

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ 24.09.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանի կողմից արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկվել են, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով առաջարկվող ապրանքի շտկված տեխնիկական բնութագիրը, արձանագրել է, որ տվյալ փաստաթղթում բացակայում է սույն ընթացակարգի հրավերով պահանջվող և ի սկզբանե մասնակցի հայտով ներկայացված տեղեկատվությունը, մասնավորապես՝ ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N 1.1) «տեխնիկական բնութագիրը» սյունակում բացակայում էր ապրանքատեսակի մասով ընթացակարգի հրավերով պահանջված տեխնիկական բնութագրի մաս կազմող «Անհավասարակշռության հայտնաբերման և անջատման համակարգի առկայության ինչպես նաև ծրագրավորված և վահանակի միջոցով արժեքների անընդհատ ցուցադրման» մասին տեղեկատվությունը, ինչը չէր համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ: Միևնույն ժամանակ Ընթացակարգի

գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ 23.09.2021թ. Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանի կողմից ներկայացված գնումների համակարգողի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված N 1.1) չի քննարկվել, քանի որ այն ներկայացվել էր օրենսդրությամբ սահմանված ժամկետի խախտմամբ:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ*** մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ Մասնակիցը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն որպես շտկում ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում կրկին արձանագրվել է անհամապատասխանություն, մասնավորապես՝ ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N 1.1) «տեխնիկական բնութագիրը» սյունակում բացակայել է ապրանքատեսակի մասով ընթացակարգի հրավերով պահանջված տեխնիկական բնութագրի մաս կազմող «Անհավասարակշռության հայտնաբերման և անջատման համակարգի առկայության ինչպես նաև ծրագրավորված և վահանակի միջոցով արժեքների անընդհատ ցուցադրման» մասին տեղեկատվությունը, ինչը չի համապատասխանել հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/33» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների

մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից տվյալ ընթացակարգի շրջանակներում Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանի կողմից 27.09.2021թ. ներկայացված բողոքի քննության արդյունքներով 22.10.2021թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/88 որոշմամբ ևս հաստատվել է Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում վերը նշված տեղեկատվության բացակայության փաստը, մասնավորապես՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն արձանագրել է հետևյալը.

«Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ուսումնասիրելով գնման ընթացակարգի հրավերով պահանջված տեխնիկական բնութագիրն ու Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանի կողմից հայտով և ապա որպես շտկում ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ Հավելված 1.1-ը Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ընթացակարգի հրավերով պահանջված տեխնիկական բնութագրի մաս կազմող «Անհավասարակշռության հայտնաբերման և անջատման համակարգի առկայության, ինչպես նաև ծրագրավորված և վահանակի միջոցով արժեքների անընդհատ ցուցադրման» մասին տեղեկատվությունը Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում բացակայում է, որպիսի պայմաններում վերջինիս կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով նախատեսված պայմաններին»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.10.2021թ. թիվ 26/26-1/16189-2021 գրությամբ Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Դավիթ Գագիկի Թումանյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**